ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Ն Յ ՈՒ Թ Ե Ր

«Տեսական և կիրառական հոգեբանության արդի հիմնախնդիրները»
IV միջազգային գիտաժողովի

Երևան, Հայաստան
Հոկտեմբեր 25-27, 2013

YEREVAN STATE UNIVERSITY

P R O C E E D I N G S

IVth International Scientific Conference
"The Current Issues In Theoretical and Applied Psychology"

Yerevan, Armenia
October 25-27, 2013

ԵՐԵՎԱՆ – 2013 – YEREVAN

ՀՏԴ 159.9 : 06
ԳՄԴ 88
S 340

Հրատարակության է երաշխավորել Երևանի պետական համալսարանի փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի գիտական խորհուրդը

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Ավանեսյան Հ. Մ. *- գիտաժողովի կազմկոմիտեի նախագահ, հ. գ. դ., պրոֆեսոր, Ընդհանուր հոգեբանության ամբիոնի վարիչ, ԵՊՀ*
Բերբերյան Ա.Ս. *- հ. գ. դ., պրոֆեսոր, Հոգեբանության ամբիոնի վարիչ, Ռուս-Հայկական (Սլավոնական) Համալսարան*
Մարգարյան Վ. Հ. *- հ. գ. դ., դոցենտ, գնդապետ, ՀՀ ՊՆ Ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտ*
Աղուզումցյան Ռ. Վ. *- հ. գ. թ., պրոֆեսոր, ՀՀ պետական կառավարման ակադեմիայի Կառավարման հոգեբանության ամբիոնի վարիչ*
Հարությունյան Ս. Ֆ. *- հ. գ. դ., Անձի հոգեբանության ամբիոնի պրոֆեսոր, ԵՊՀ*
Խաչատրյան Ն. Գ. *- հ. գ. թ., դոցենտ, ԵՊՀ Անձի հոգեբանության ամբիոնի վարիչ*
Գրիգորյան Վ. Հ. *- կ. գ. դ., Մարդու և կենդանիների ֆիզիոլոգիայի ամբիոնի պրոֆեսոր, ԵՊՀ*
Հովհաննիսյան Ս. Վ. *– մ. գ. թ., Ընդհանուր հոգեբանության ամբիոնի դոցենտ, ԵՊՀ*
Ասրիյան Է. Վ. *- հ. գ. թ., Ընդհանուր հոգեբանության ամբիոնի դոցենտ, ԵՊՀ*
Ստեփանյան Լ. Ս. *- Ընդհանուր հոգեբանության ամբիոնի ասիստենտ, կ. գ. թ., ԵՊՀ*
Մուրադյան Ե. Բ. *– կ. գ. թ., Անձի և մասնագիտական գործունեության գ/հ լաբորատորիա, ԵՊՀ*
Սարգսյան Դ. Յու. *- հ. գ. թ., Անձի և մասնագիտական գործունեության գ/հ լաբորատորիա, ԵՊՀ*
Հովհաննիսյան Ս. Պ. *- Փորձարարական հոգեբանության գ/հ լաբորատորիա, ԵՊՀ*

EDITION COMMITTEE

Avanesyan H. M. *– Chairman of the International Conference, Doctor of Psychology, Prof., Head of Chair of General Psychology, YSU, Yerevan*
Berberyan A. S. *- Doctor of Psychology, Prof., Head of Chair of Psychology, RAU (Slavonic), Yerevan*
Margaryan V. H. *- Doctor of Psychology, National Institute of Strategic Studies MOD RA, Yerevan*
Aghuzumcyan R.V. *- PhD, prof., Head of Chair of Psychology of management of PAA RA, Yerevan*
Harutyunyan S. F. *- Doctor of Psychology, Professor Chair of Personality Psychology, YSU, Yerevan*
Khachatryan N. G. *– PhD.,ass.prof., Head of Chair of Personality Psychology, YSU, Yerevan*
Grigoryan V. H. *– Doctor of Biology, Prof. of Dep. of human and animal physiology, YSU, Yerevan*
Hovhannisyan S. V. *– PhD., Associate Professor, Chair of General Psychology, YSU*
Asriyan E. V. *- PhD., Associate Professor, Chair of General Psychology, YSU*
Stepanyan L. S. *– PhD., Assistant Professor, Chair of General Psychology, YSU*
Muradyan E. B. *– PhD., Laboratory in Psychology of Personality and Professional Activities, YSU*
Sargsyan D. Yu. *- PhD., Laboratory in Psychology of Personality and Professional Activities, YSU*
Hovhannisyan S. P. *– Laboratory of Experimental Psychology, YSU*

S 340 «Տեսական և կիրառական հոգեբանության արդի հիմնախնդիրները» IV միջազգային գիտաժողովի նյութեր. – Երևան, Էդիթ Պրինտ հրատ., 2013 թ. - 455 էջ:

Սույն ժողովածուն ներառում է 2013 թ. հոկտեմբերի 25-27-ը Երևանի պետական համալսարանում անցկացված «Տեսական և կիրառական հոգեբանության արդի հիմնախնդիրները» IV միջազգային գիտաժողովի զեկույցների նյութերը:

ՀՏԴ 159.9 : 06
ԳՄԴ 88

ISBN 978-9939-52-747-5

ԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Ավանեսյան Հ. Մ. *- գիտաժողովի կազմկոմիտեի նախագահ, հ. գ. դ., պրոֆեսոր, ԵՊՀ Ընդհանուր հոգեբանության ամբիոնի վարիչ*

Բաղդասարյան Ա. Ս. *- փ. գ. թ., դոցենտ, ԵՊՀ Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի դեկան*

Բերբերյան Ա. Ս. *- հ. գ. դ., պրոֆեսոր, Հոգեբանության ամբիոնի վարիչ, Ռուս-Հայկական (Սլավոնական) Համալսարան*

Մարգարյան Վ. Հ. *- հ. գ. դ., դոցենտ, գնդապետ, ՀՀ ՊՆ Ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտ*

Ադուզումցյան Ռ. Վ. *- հ. գ. թ., պրոֆեսոր, ՀՀ պետական կառավարման ակադեմիայի Կառավարման հոգեբանության ամբիոնի վարիչ*

Մեղրակյան Ս. Ա. *- հ. գ. թ., պրոֆեսոր, Գործնական հոգեբանության և սոցիոլոգիայի «Ուրարտու» համալսարանի ռեկտոր*

Գևորգյան Ս. Ռ. *- հ. գ. դ., պրոֆեսոր, ՀՊՄՀ պրոռեկտոր գիտաուսումնական մասով*

Հարությունյան Ս. Ֆ. *- հ. գ. դ.,Անձի հոգեբանության ամբիոնի պրոֆեսոր, ԵՊՀ*

Գրիգորյան Վ. Հ. *- կ. գ. դ., Տ. Մուշեղյանի անվան Մարդու և կենդանիների ֆիզիոլոգիայի ամբիոնի պրոֆեսոր, ԵՊՀ*

Խաչատրյան Ն. Գ. *- հ. գ. թ., դոցենտ, ԵՊՀ Անձի հոգեբանության ամբիոնի վարիչ*

Գասպարյան Խ. Վ. *- հ. գ. թ., դոցենտ, ԵՊԲՀ Բժշկական հոգեբանության ամբիոնի վարիչ*

Բաբայան Ա. Ա. *- հ. գ. թ., պրոֆեսոր, Ֆիզիկական կուլտուրայի Հայկական պետական ինստիտուտի հոգեբանության և մանկավարժության ամբիոնի վարիչ*

Նաղդյան Ռ. Մ. *- հ. գ. թ., դոցենտ, ՀՀ ԳԱԱ Հոգեբանության ամբիոնի վարիչ*

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

Իմեդաձե Ի. Վ. *- հ. գ. դ., Վրաստանի ԳԱԱ թղթակից անդամ, Թիֆլիս, Վրաստան*

Բասկո Լ. *- մանկավարժության դոկտոր, Ավինյոնի համալսարան, Ավինյոն, Ֆրանսիա*

Ալախվերդով Վ. Մ. *- հ. գ. դ., պրոֆեսոր, Սանկտ-Պետերբուրգի պետական համալսարան, Ռուսաստան*

Ենիկոլոպով Ս. Ն. *- հ. գ. թ., դոցենտ, Մոսկվայի պետական հոգեբանա-մանկավարժական համալսարան, Ռուսաստան*

Կարագաշյան Մ. Հ. *- հոգեբանության դոկտոր, Մորգանվիլ, Նյու-Ջերսի, ԱՄՆ*

Ալեքսանյան Հ. *- հոգեբանության դոկտոր, Տրանս-Միշն ասոցիացիա,, Ֆրանսիա*

Խլոմով Կ. Դ. *- հ. գ. թ., Մոսկվայի պետական հոգեբանամանկավարժական համալսարան, «Պերեկրյոստոկ» կենտրոն, Ռուսաստան*

Ասբեդ Արյան *- հոգեբանության դոկտոր, Բուենոս-Այրեսի համալսարան, Արգենտինա*

Ակոպով Գ. Վ. *- հ. գ. դ., պրոֆեսոր, Պովոլժսկի պետական սոցիալ-հումանիտար ակադեմիա, Սամարա, Ռուսաստան*

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

Ավանեսյան Հ. Մ. *- կազմկոմիտեի նախագահ, հ.գ.դ., պրոֆեսոր, ԵՊՀ Ընդհանուր հոգեբանության ամբիոնի վարիչ*

Բաղդասարյան Ա. Ս. *- փ.գ.թ., դոցենտ, ԵՊՀ Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի դեկան*

Սողոյան Ա. Ֆ. *- բ.գ.թ., Հայկական հոգեբուժական ասոցիացիայի նախագահ*

Ավագիմյան Ռ.Ա. *- հ.գ.թ., Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան*

Ամիրյան Դ. Ս. *- հ.գ.թ., դոցենտ, «Բաց հասարակություն» ֆոնդ, Հայաստան*

Բեջանյան Ա. Տ. *- հ.գ.թ., Առողջության և կրթության հայկական կենտրոնի տնօրեն*

Հովհաննիսյան Ս. Վ. *- մ.գ.թ., դոցենտ, ԵՊՀ*

Ասրիյան Է.Վ. *- հ.գ.թ., դոցենտ, ԵՊՀ*

Ստեփանյան Լ. Ս. *- կ.գ.թ., ԵՊՀ*

Գալստյան Ա. Ս. *- ԳՏԼ, ԵՊՀ*

Հարությունյան Ն. Ա. *- հ.գ.թ., ԵՊՀ*

Սարգսյան Դ. Յու. *- հ.գ.թ., ԵՊՀ*

Հովհաննիսյան Ս.Պ. *- ԵՊՀ*

Պապոյան Վ. Ռ. *-հ.գ.թ., դոցենտ, ԵՊՀ*

Սահակյան Մ. Ս. *- հ.գ.թ., դոցենտ, ԵՊՀ*

Մուրադյան Ե.Բ. *- կ.գ.թ., ԵՊՀ*

Հայրապետյան Դ.Ռ. *- հ.գ.թ., դոցենտ, ԵՊՀ*

Հովհաննիսյան Հ.Ռ. *- հ.գ.թ., դոցենտ, ԵՊՀ*

Գալստյան Ա.Ա. *- հ.գ.թ., ԵՊՀ*

ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՎԱՐՔԻ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Հակոբջանյան Ա. Ռ.
ԵՊՀ, Երևան, Հայաստան

Հանգուցային բառեր. առողջության հոգեբանություն, առողջության պահպանմանն ուղղված վարք, առողջությանն առնչվող վարք, առողջ վարքի գործոններ:

Առողջությունը մարդու կենսագործունեության արդյունավետությունն ապահովող հիմնարար պայմանն է: Ժամանակակից գիտական սահմանումներում տարբեր մեկնաբանություններ են տրվում առողջությանը: Ըստ առողջապահության համաշխարհային կազմակերպության կանոնադրության՝ «առողջությունը ֆիզիկական, հոգեկան և սոցիալական լիարժեք բարեկեցության վիճակն է, այլ ոչ թե պարզապես հիվանդության կամ ֆիզիկական թերությունների բացակայությունը» [4]:

Հոգեբանական գիտության զարգացման ներկա փուլում առողջության հիմնախնդրի ուսումնասիրություններով զբաղվում է հատուկ գիտակարգ՝ առողջության հոգեբանությունը: Տարբերում են երեք հիմնական ոլորտ, որոնց շրջանակներում առանձնացվում են ուսումնասիրության խնդիրներ: Դրանք են առողջությանն առնչվող վարքի և կանխարգելման հարցերը, առողջության ու սթրեսի կամ հոգեմարմնական խնդիրների ուսումնասիրությունը և հիվանդության ու խնամքի հոգեսոցիալական կողմի ուսումնասիրությունները: [3]

Մենք կանդրադառնանք խնդիրների առաջին ոլորտին՝ առողջությանն առնչվող վարքին: Առողջությանն առնչվող վարքի հոգեբանական առանձնահատկություններն ուսումնասիրելու համար անհրաժեշտ է նախ ուսումնասիրել և դուրս բերել դրսևորվող վարքի հիմքում ընկած ընկալումները, մտքերն ու համոզմունքները (կոգնիցիաները) [2, 3]:

Ընդհանուր առմամբ առողջությանն առնչվող վարքը Դեյվիդ Գոչմանը (David Gochmann) մեկնաբանում է որպես անհատների, խմբերի ու կազմակերպությունների կողմից արվող գործողություններ, ինչպես նաև այդ գործողությունների հետևանքներ, դետերմինանտներ ու կոռելյատներ, որոնցից իրականանում են սոցիալական և ռազմավարական փոփոխություններ, զարգանում են քոփինգ հմտություններն ու բարելավվում է կյանքի որակը: [1] Առանձնացնում են նաև առողջությանն առնչվող և առողջությանն (պահպանմանը) ուղղված վարք: Առողջությանն առնչվող վարքը մեկնաբանվում է որպես ցանկացած գործողություն, որը կապված է հիվանդության կանխարգելման, առողջության պահպանման ու բարելավման հետ: Այս տիպի վարքը ենթադրում է կամային և ոչ կամային ջանքերի օգտագործում, այսինքն՝ մտադրված բարելավվելու առողջությունը և որպես ուղղակի պահանջվող գործողության ձև: Որևէ հիվանդության ռիսկի նվազեցման համար մտադրված իրականացվող վարքն արդեն կոչվում է առողջությանն ուղղված վարք [1]:

Մեր կողմից իրականացվող հետազոտության նպատակն է ուսումնասիրել առողջության պահպանմանն ուղղված վարքաձևերի հոգեբանական գործոնները՝ համոզմունքները, դիրքորոշումները, դրդապատճառային համակարգի առանձնահատկությունները, ինքնարդյունավետությունը: Իբրև հետազոտության առաջին փուլ՝ իրականացվել է ուսումնասիրություն (20-65 տ. 120 մասնակից), որի նպատակն էր պարզել առողջության նկատմամբ վերաբերմունքի և վարքային դրսևորումների հարաբերակցությունը: Ուսումնասիրությունն իրականացվել է հարցարանային մեթոդով: Հարցաթերթը ներառում էր առողջության պահպանման համար անհրաժեշտ տիպական գործողություններին վերաբերող հարց՝ «ինչ է պետք անել առողջության պահպանման համար», մասնակիցների կողմից իրականացվող տիպական գործողությունների մասին հարց. «դուք ինչ եք անում Ձեր առողջության պահպանման համար», ինչպես նաև հարցեր կանխարգելող գործողությունների վերաբերյալ՝ «ինչ պետք չէ անել առողջության պահպանման համար», «ինչից եք դուք խուսափում»: Այս առաջնային ուսումնասիրության արդյունքում ստացված տվյալները մեր կողմից խմբավորվել են ըստ պատասխանների հաճախականության, ինչի ար-

դյունքում կարող ենք առանձնացնել մի քանի վարքաձևեր, որոնք հետազոտության մասնակիցներն ամենից հաճախ են նշել որպես անհրաժեշտ միջոցներ՝ առողջության պահպանման համար: Դրանք են առողջ սննդակարգին հետևելը (անհրաժեշտ են համարում հարցվողների 94%-ը), սպորտով զբաղվելը (74%), վնասակար սովորություններից զերծ մնալը՝ չծխել, չխմել (56%), ֆիզիկական ակտիվությունը, շարժունակությունը (47%) և պարբերաբար բուժզննում անցնելը (42%): Համեմատելով առողջ լինելու վերաբերյալ պատկերացումները և դրսևորվող վարքի հարաբերակցությունը՝ նկատում ենք, որ դրանց միջև կան էական տարբերություններ: Նշված բոլոր վարքաձևերն իրականացվում են մասնակիցների ավելի քիչ տոկոսի կողմից. առողջ սննդակարգի հետևում են միայն 70% հարցվողները, սպորտով զբաղվում են 49%-ը, վնասակար սովորություններ չունեն միայն 32%-ը, ակտիվ կենսակերպ ունեն 29%-ը և պարբերական բուժզննումներ անցնում են 42-ից միայն 20%-ը: Այս տարբերությունը կարող է պայմանավորված լինել մի շարք գործոններով. հոգեբանական, սոցիալ-տնտեսական, էկոլոգիական: Հոգեբանական գործոնների ուսումնասիրության շարքում ներկայում արդիական են այն հետազոտությունները, որոնք ուղղված են առողջ վարքի դրսևորման խոչընդոտների բացահայտմանը, հատկապես համոզմունքային դաշտի ուսումնասիրություններին: Առողջության պահպանման համար ձևավորվող վարքի խոչընդոտները կարող են պայմանավորված լինել համոզմունքների հակասականությամբ: Այդ վարքի ձևավորումը, ինչպես արդեն նշել ենք, կապված է մտքերի հետ: Դիտարկենք վարքաձևի ձևավորմանը նպաստող բաղադրիչները. առաջին հերթին դա վարքը փոխելու համապատասխան մտադրությունն է, որի հիմքում էլ ընկած են դիրքորոշումները, նշանակալի անձանց կարծիքները, ինքնարդյունավետությունը, դրդապատճառները, վարքի վերահսկողությունը և ըստ մեր ենթադրության, այդ մտադրության վրա ազդող գործոն է նաև ապագայում՝ որպես առողջ անձի կերպարի մասին պատկերացումները: Հաշվի առնելով այս գործոնների դերը վարքի ձևավորման մեջ՝ մեր հետազոտության հաջորդ փուլն ուղղված է դրանց ազդեցության ուսումնասիրությանը մտադրության ձևավորման վրա: Այսինքն այն, թե ներանձնային որ գործոնը կարող է խոչընդոտել առողջ վարքի ձևավորմանը և ինչպիսի գործոններ կարող են նպաստել նոր վարքի ձևավորման համար:

Այսպիսով, առանձնացնելով առողջության պահպանմանն ուղղված վարքը՝ մենք անդրադարձանք այդ վարքի գործոնների ուսումնասիրման առանձնահատկություններին: Առողջ վարքի ձևավորման գործում անհրաժեշտ են միջառարկայական գիտելիքներ, սակայն հոգեբանական ուսումնասիրությունները հնարավորություն են տալիս դուրս բերելու այն գործոնները, որոնք կարող են որոշիչ դեր ունենալ այդ վարքի ձևավորման համար: Մեր կողմից իրականացվող հետազոտության նպատակը լայն իմաստով առողջ վարքի ձևավորմանը խոչընդոտող և նոր վարքի ձևավորմանը նպաստող գործոնների դուրսբերումն է: Իհարկե, իբրև կենսակերպ, առողջ վարքի ձևավորումը ենթադրում է նաև շատ այլ գործոնների (սոցիալական, էկոլոգիական) հաշվառում: Սակայն ներանձնային գործոնների ուսումնասիրությունը՝ իրենց արդյունավետ և անարդյունավետ կողմերի դուրսբերմամբ, նշանակալի են փոփոխելի վարքի՝ առողջության պահպանման, բարելավման ու բարեկեցության ապահովման համար:

Գրականություն

1. Breslow Lester, Encyclopedia of Public Health, Macmillan Reference USA/Gale Group Thomson Learning, 2002, 1480p.
2. Forshaw Mark, Essential Health Psychology, Oxford University Press, 2002, 236p.
3. The Oxford Handbook of Health Psychology. Edited by Howard S. Friedman, Oxford University Press, 2011, 916p.
4. World Health Organization. Constitution of the World Health Organization - Basic Documents, Forty-fifth edition, Supplement, October, 2006.

THE STUDY OF HEALTH BEHAVIOR FACTORS

Hakobjanyan A. R.
YSU, Yerevan, Armenia

Keywords: health psychology, health behavior, health-related behavior, health directed behavior.

There are many questions about health-related behavior or health behavior that are not yet well understood. Therefore, scientific researchers continue to attempt to understand the nature and causes of many different health behaviors. Health behavior encompasses a large field of study that cuts across various fields, including psychology, nowadays a special branch of it – health psychology.

In the broadest sense, health behavior refers to the actions of individuals, groups, and organizations, which include social change, policy development and implementation, improved coping skills, and enhanced quality of life.

In a study that was attempted by us was revealed that there are some differences between perception of healthy lifestyle and performance of health behaviors. Further research is directed on identification of health behavior factors.

ԵՐԱԶՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՀՈԳԵԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՀՈԳԵԹԵՐԱՊԻԱՅԻ ՄԵՋ

Հարությունյան Ա. Կ.
Վանաձորի հոգեբանական վերականգնողական կենտրոն ՀԿ, Վանաձոր, Հայաստան

Հանգուցային բառեր. երազներ, հոգեվերլուծություն, սիմվոլիկաներ, հոգեթերապիա, հոգեկարգավորում, հիպնոս:

Աշխատանքը այցելուների հետ պահանջում է տեսական հոգեբանությունից կայուն և խորը գիտելիքներ: Դրանք, խարսխվելով անձնային հատկանիշների ու հմտությունների վրա, զգալի դեր են կատարում պատշաճ մասնագիտական թերապևտիկ ու շտկողական աշխատանքների մեջ: Երազների կիրառությունը հոգեթերապիայի և հոգեկարգավորման մեջ հանդիսանում է կարևոր մեթոդական բազա, որի բաղկացուցիչների մի մասը ձևավորվել է դեռ մի քանի տասնամյակ առաջ, մի մասն էլ՝ համեմատաբար վերջերս, և բոլոր շարադրվելիք հայացքներն էլ, չնայած իրենց որոշ հակասականությանն ու իրարամերժությանը, պարունակում են ռացիոնալ գիտելիքներ, որոնք ունեն ոչ միայն տեսական նշանակություն, այլ որ ոչ պակաս կարևոր է, կիրառելի են և՛ նեղ մասնագիտացմամբ պրակտիկ հոգեբանների, և՛ կոմպլեքս աշխատանքներով առաջնորդվող մասնագետների համար: Այժմ համառոտ շարադրենք ու վերլուծենք հոգեբանության տեսության և պրակտիկայի մեջ առավել նշանավոր հեղինակների տեսակետները՝ այցելուների երազների ներուժը կիրառելու վերաբերյալ:

Գաղտնիք չէ, որ դասական հոգեվերլուծությունը երազների հետ աշխատանքը սկսեց նախ և առաջ որպես հոգեթերապևտիկ մեթոդ: Հոգեվերլուծությունը, ի տարբերություն հնում երազների մեկնության արվեստի, կենտրոնացած չէ ապագան կանխագուշակելու վրա, այլ ձգտում է բացահայտել անցյալը՝ մարդու ներկա պրոբլեմները առավել խորը հասկանալու համար [7; 850, 2;38, 41-42]: Ետֆրեյդիզմն ու նեոֆրեյդիզմը, դրանց առավել ականավոր ներկայացուցիչները Ֆրեյդից բավական տարբեր կարծիքներ էին արտահայտում երազների, դրանց նշանակության, վերլուծության և հոգեթերապիայի ու հոգեկարգավորման մեջ երազների գրավելիք տեղի առումով:

Համաձայն Ալֆրեդ Ադլերի, երազը բնավ չի ձգտում անցյալը վերադառնալ, ինչպես կարծում էր Զ. Ֆրեյդը: Այն ուղղված է առաջ և նպատակամղված է որոշակի խնդրի լուծմանը: Երազն